վերնիճար *աւերակները*, էգնոց *գեղը*, Կոխիդ, Սրբահան, Ոդեկ *եայլաները*, *ախոռները*, *մացրաները եւ կործանուած ամրոցները*: *Ոդեկ առ–ը ձախից՝ Խախամին եւ Մեղրբեր լեռներից իջած* էգնոց, Բուլանգ, Գորգեր, Ջուանգիր, Սրբահան, Բաղչէ Մ. *եւ* Փ., Լիթիրին *եւ* Վիկ *առ–րն է ընդու–*

են տուել իրենց գոյութիւնը. իսկ Ցուրէն-Շէհէրը Սելջուքների մուտքից առաջ արդէն կործանուած է եղել: Փաշա-Փագի աւերակների կոյտերը ցոյց են տալիս, որ այս բարձունքից երկար դարեր տիրել են Թորդումի իշխանները. նոյն իսկ ԺԴ. ԺԵ. անկեալ դարերում զանազան անձանց կարկատաններ են կատարել այս շինութիւնների մէջ:

Թորթումը ցոյց է տալիս, որ նա կրօնով սովորութիւններով միշտ կապուած է եղել Արարատեան աշխարհի հետ, նոյն իսկ ամենավաղ վիշապազանց շրջանում: Վիշապազանց Արարատեան նահանգում ունեցած որձաքարէ գլանաձեւ արձանները գտնւում են այստեղ Ջիաբէթ (Ջուհուրաբ) ճամփի ափերում Թիքմաներում (կոնդեր) թուով շուրջ 30 հատ: Այս կարծր գլանաձեւ քարերը նուրբ կերպով տաշուած եւ յղկուած են, որոնց վրայ քանդակուած են վիշապազանց այլ եւ այլ երեւոյթները՝ եզի, գոմէշի, օձի, առիւծի, մողէսի եւ ուրիշ գազանների պատկերներով: Ոլուխլի (Ծորակ) առ-ի ակունքի այս արձաններից ջրերը իջնում են, որ գնան ոռոգեն Զատոկից մինչեւ Խաղու գեղերի հանդերը: Փաշա-Փագին կարծես հիմնել են վիշապազանց քրմերը-ջրպետները, որ հսկեն ջրանցքի ջրերին անխափան առաջ գնալուն, նրանք պաշտպանել են Սրբահանի, Ոդեկի, Անջուրձորի (Կուրի-դիրէ) ջրանցքները, որ բաւարարեն մշակութիւններին: Արդեօք այս Սրբահան գեղը, վանքը եւ ուխտատեղին որեւէ կապ չունի՞ Բաբելական Օանէսի առասպելի հետ, որին նկարում են ձկան մաշկով: Արդեօք Զատոկի եւ Խախուլի վանքերի Մեծամօր (Անահիտի) պաշտամունքը, ուխտագնացութիւնը իրենց ծագումով կապուած չե՞ն կոնդերի (Թիքմա) որձաքարեայ արձանների հետ: